# Հ Ր Ա Մ Ա Ն   N 758-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

**«14» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 Թ.                                   ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 704-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ապահովության, անվտանգության և սոցիալական վերաինտեգրման սկզբունքներին համապատասխան պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի վերանայման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ (այսուհետ՝ Աշխատանքային խումբ) հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Լևոն Բալյան | Արդարադատության նախարարի տեղակալ (Աշխատանքային խմբի ղեկավար) |
| Եվա Սաղոյան | Գլխավոր դատախազի խորհրդական (համաձայնությամբ) |
| Լևոն Չարխիֆալակյան | Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ (համաձայնությամբ) |
| Վազգուշ Կոստանյան | Արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության քրեակատարողական և |

| | |
|---|---|
| | պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման և ներման հարցերով բաժնի պետ |
| Արփի Լազարյան | Արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության քրեական և քրեադատավարական օրենսդրության մշակման բաժնի պետ |
| Քնարիկ Մկրտչյան | Արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման և ներման հարցերով բաժնի գլխավոր մասնագետ |
| Հայրապետ Անանյան | ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ |
| Հովհաննես Մարգարյան | Քրեակատարողական ծառայության սոցիալ, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի պետի տեղակալ |
| Արմինե Ադամյան | Պրոբացիայի ծառայության վերասոցիալականացման և վերականգնողական բաժնի պետի տեղակալ |
| Վիլիամ Մինասյան | Պրոբացիայի ծառայության Լոռու մարզային բաժնի ավագ մասնագետ |
| Կարինե Հովհաննիսյան | Արդարադատության նախարարի տեղակալի օգնական |
| Զարուհի Հովհաննիսյան | ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ |
| Արտակ Կիրակոսյան | «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության տնօրեն (համաձայնությամբ) |

| | |
|---|---|
| Ռոման Ահարոնյան | «Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ) |
| Արշակ Գասպարյան | Փորձագետ |
| Արմենակ Դավթյան | □Առավոտ օրաթերթ□ ՍՊԸ և Հանրային ռադիոյի □Ռադիոլուր□ –ի լրագրող (համաձայնությամբ): |

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

1) մշակել և եռամսյա ժամկետում Արդարադատության նախարարին ներկայացնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունների վերաբերյալ նախագծեր,

2) ըստ անհրաժեշտության կազմակերպել մասնագիտական և հանրային քննարկումներ:

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**

X ____________________

**ԼԵՎՈՆ ԲԱԼՅԱՆ**